ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Գագիկ Մուշեղի Հակոբյանի «Պարտադիր ապահովագրատեսակների ներդրման ազդեցությունը ՀՀ տնտեսության և ապահովագրական շուկայի զարգացման վրա» թեմայով ատենախոսության վերաբերյալ ներկայացված Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Պարտադիր ապահովագրատեսակները ցանկացած երկրի սոցիալ-տնտեսական կյանքում ունեն կարևոր դերակատարություն: Հայաստանի Հանրապետությունում ևս բազմաթիվ սոցիալական խնդիրներ կարող են արդյունավետ կերպով լուծվել պարտադիր ապահովագրատեսակների միջոցով: Դրա վառ վկայությունը ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (ԱՊՊԱ) համակարգի արդյունավետ ներդրումն է, որի արդյունքում ՀՀ-ում ավտովթարների հետևանքով տուժած անձինք հստակ նախագծված և երաշխավորված գործընթացով ստանում են ապահովագրական հատուցումներ և վերականգնում իրենց կրած վնասները: Լուծելով տարբեր սոցիալ տնտեսական խնդիրներ՝ պարտադիր ապահովագրության համակարգերը միևնույն ժամանակ լուրջ խթաններ են ստեղծում ապահովագրական համակարգերի և ապահովագրական մշակույթի զարգացման համար: Համապատասխանաբար թեման արդիական է և Հայաստանի Հանրապետությունում ևս տարբեր սոցիալական և տնտեսական ռազմավարական բնույթի խնդիրներ կարող են արդյունավետորեն լուծվել պարտադիր ապահովագրատեսակների միջոցով:

Ատենախոսության բովանդակության, կառուցվածքի և գիտական նորույթի մասով հիմնական դիտարկումները և դիտողությունները

1. Ատենախոսության թեման վերաբերում է պարտադիր ապահովագրատեսակների ներդրման ազդեցությանը ՀՀ տնտեսության և ապահովագրական շուկայի զարգացման

վրա: Կարծում ենք աշխատանքը բովանդակային և կառուցվածքային առումով առավել կշահեր, եթե հեղինակն իր աշխատանքում առավել հանգամանորեն և համաչափ խորությամբ անդրադառնար միջազգային պրակտիկայում կիրառվող պարտադիր ապահովագրության տարբեր տեսակներին, դրանց սոցիալ-տնտեսական նպատակներին և դրական ազդեցություններին՝ ներառյալ համապատասխան թվային հաշվարկներով և օրինակներով,

2. Ատենախոսությունում, թեմային ոչ համաչափ ծավալով և խորությամբ խոսվում է ՀՀ-ում առողջության պարտադիր ապահովագրության ներդրման հարցերի և խնդիրների մասին:

3. Ատենախոսությունում հեղինակի կողմից առաջադրված որոշ խնդիրներ և դրանցից բխող որոշ ենթահարցեր (օրինակ՝ «ուսումնասիրել պարտադիր ապահովագրատեսակների ներդրման մեթոդաբանական հիմնահարցերը, սկզբունքները և խնդիրները») որևէ կերպով չեն օգտագործվում աշխատանքի վերջնական նպատակներին հասնելու համար և (կամ) չեն արտացոլվում եզրահանգումներում:

4. Ատենախոսությունում թեմայի բովանդակությունից ամհամաչափ շատ է նկարագրված ապահովագրության ձևերի (պարտադիր-կամավոր) և տեսակների (անձնական, գույքային, պատասխանատվության, կյանքի և ոչ կյանքի) դասակարգման վերաբերյալ նկարագրությունները: Կարծում ենք, որ այդ դասկաարգումները, որպես ներածական մաս կարելի էր առավել հակիրճ ներկայացնել և «արագ» անցում կատարել ատենախոսության բուն խնդրի լուծմանը:

5. Աշխատանքում որոշ վիճակագրական տվյալներ և վերլուծություններ չունեն հստակ հաշվարկներ, հղումներ և հիմնավորումներ կամ լավ ձևակերպված չեն կամ ոչ ճիշտ պնդումներ են (օրինակ՝ ատենախոսության 102 էջում նշվում է, որ ՀՀ ապահովագրական ընկերությունների ակտիվների միջինում 60%-ը ձևավորվում են ներդրումային գործունեության արդյունքում կամ ատենախոսության 160 էջում հեղինակը նշում է, որ ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության վերլուծությունը ցույց է տվել, որ ապահովագրական ընկերությունների շահույթի ապահովման գործընթացում

ամենամեծ նշանակությունը և ազդեցությունն ունի ապահովագրական ընկերությունների ներդրումային գործունեությունը):

6. Կարծում ենք, որ ատենախոսության գիտական նորույթներից՝ «Բացահայտվել է, որ ապահովագրական ընկերությունների շահութաբերության և ֆինանսական կայունության վրա ազդող հիմնական գործոնը ներդրումային գործունեությունն է, որի ապահովման հենքը ԱՊՊԱ-ից և առողջության ապահովագրությունից գոյացող ապահովագրավճարները և տեխնիկական պահուստներն են: Հիմնավորվել է, որ վերջիններիս ներդրումային ռազմավարությունները, հատկապես երկարաժամկետ գործունեության համար, թույլ են տալիս տնտեսության կայունացնողի դեր խաղալ» գիտական նորույթ չի կարելի համարել, քանի որ, դրա առաջին մասում, ինչպես արդեն նշեցինք, բավարար հիմնավորված դատողություններ չեն, իսկ երկրորդ մասում՝ առաջին մասի հետ չկապված և ոչ գիտական նորույթ համարվող եզրահանգումներ են: Բացի դրանից՝ կարծում ենք, որ նշված առաջարկությունն ուղղակիորեն չի կապվում ատենախոսության թեմայի հետ:

<u>Գիտական մամուլում հիմնական արդյունքների հրատարակման և սեղմագրի համապատասխանության մասով</u>

Հետազոտության հիմնական արդյունքները և քննարկված հիմնախնդիրները արտացոլված են ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից սահմանված հրատարակություններում հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում, որոնք ներկայացված են առաքված սեղմագրում: Ներկայացված սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության հիմնական բովանդակությանը և հիմնականում արտացոլում է դրա դրույթներն ու արդյունքները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Չնայած վերը նշված դիտարկումներին և դիտողություններին՝ կարծում ենք **Գագիկ Մուշեղի Հակոբյանի՝ «Պարտադիր ապահովագրատեսակների ներդրման ազդեցությունը ՀՀ տնտեսության և ապահովագրական շուկայի զարգացման վրա»**

թեմայով ատենախոսությունը կարող է որակվել, որպես հեղինակի կողմից կատարված ինքնուրույն գիտական հետազոտություն, որում տեղ գտած առանձին գաղափարներ և եզրահանգումներ կարող են օգտակար լինել գործնական կիրառության համար:

Այսպիսով, **Գագիկ Մուշեղի Հակոբյանի «Պարտադիր ապահովագրատեսակների ներդրման ազդեցությունը ՀՀ տնտեսության և ապահովագրական շուկայի զարգացման վրա» թեմայով ատենախոսությունն** ընդհանուր առմամբ համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն, հաջող պաշտպանության դեպքում, արժանի է Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝
ՀՀ ԿԲ-Ի ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ և
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՏՆՕՐԵՆ,
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈՑԵՆՏ **Վ. Հ. Ավետիսյան**

07 հունիսի 2024թ.

Վ.Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ՀՀ ԿԲ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Վ. Ա. Պետրոսյան**

07 հունիսի 2024թ.